

նական կ'երևնայն իւրաքանչիւր մեռելոց  
տեղը պզտի պատ մը սահման ունի, և  
ամէն մէկուն ինկած միջոցը յայտնի կը  
տեսնուի : Այս տխուր դամբանները ըստ  
մեծի մասին յղկած մարմարին քարե-  
րով շինուած են, որոնց ձերմկութիւ-  
նը և կատարեալ արուեստը զարմանք  
կ'ազդէ ճանապարհորդին : Այնուուն ալ  
շինուածքը ընդհանրապէս միակերպ է  
և կամարածե . ներսի կողմը փորուած  
են խորշեր ուր արտասուաց սափորները  
կը դրուեին . առջեի և ետևի կողմերն  
ալ սեղան և քարէ նստարաններ կան,  
ուր որ ծնողք և քարեկամք գերեզմա-  
նական ճաշ կը պատրաստէին : Վիանի  
մը գերեզմանաց վրայի եղած բարձրա-  
քանդակները կը ցուցընեն թէ ինչպէս  
Հոռմայեցւոց ունայնասիրութեան ըզ-  
դածմունքը՝ երբեմն ինչուան իրենց ցա-  
ւոցը հետ կը միանային : Պատույ տեղի  
քը, զոր քաղաքացւոց մեծերը գրաւած  
էին փորոնին և կամ թատերց մէջը,  
փառաւորապէս քանդակուած կը տես-  
նուին քանի մը գերեզմանաքարերուն  
վրայ, ինչպէս մենք ազնուական ընտա-  
նեաց ստորերկրեայ գերեզմանաքարե-  
րուն վրայ իրենց ազնուականութեան  
ինիքը կամնշանը կը դնենք : Այս շիրմաց  
մէկուն վրայ արձանապիր մը կայ՝ որով  
կ'իմացուի թէ ամբողջ քաղաքացիք ալ  
սովորութիւն ունէին պատուել մեծա-  
մեծ անձինքը, իրենց ծախսովը նշանա-  
ւոր մարդկանց թաղումը կատարելով :  
Արձանապիրը կ'ըսէ թէ շիրմը կանգ-  
նած է Ալիա Դեկիմիլլա անունով  
Դեմետրի քրմուհին՝ ի պատիւ ամուս-  
նոյն Արկոսի Ալիսի և իրենց որ-  
դւոյն, ժողովրդենէ շնորհուած երկրի մը  
վրայ : Պոմպէայի ուրիշ շիրմներն ալ  
հետաքննական են անով որ անոնց վրայի  
զարդերը շինող հոռմայեցւոց գաղա-  
փարները հիմակուան ժողովրդոց գա-  
ղափարին մերձաւոր են . վասն զի կը  
տեսնենք հօն արևելեան ազգաց սիրելի  
այլաքանութիւնքը . ինչպէս Ալիսիա  
Տիւկէ անունով մէկը իր ընտանեացը,  
ազատագրելոց և իրեն համար շինել  
տուած գերեզմանաքարին վրայ ուզեր

էր որ նաւ մը փորուի որ նաւահանգիս-  
տը մտնելու վրայ է : Այս թողունք ու-  
րիշ բազմաթիւ շիրմները, որոնք ա-  
նուանի են իրենց գործին փափկութեր  
և քանդակաց մեծագործութեանը հա-  
մար . ասանկ են կալուենտիոս Առիեւ-  
տոսի շիրմը, զոր հմուտ հնախօսք  
հին գերեզմանաց ամենէն վսեմը ա-  
նուանեցին, և Ակաւրոսինը, որ ծան-  
րագին գաճէ բարձրաքանդակներավ-  
զարդարուած է, ուր որսէր և ըմբշա-  
մարտից գօտեկուութեան տեսարան-  
ներ փորուած են, և որոնց մեկնու-  
թիւնը արձանագրութեանց մէջը կը  
տեսնուի : Այս գերեզմանները կարծր  
նիւթերէ շինուած ըլլալով, աւելի լաւ  
պահուած են քան թէ Պոմպէայի ու-  
րիշ հասարակաց և առանձնական շին-  
քերը :

#### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մահմետին դրոշ :

Այս կերպասեայ դրոշը Արհմետին  
զգեստներուն մէկ մասն է, զոր Տաճ-  
կըները մեծ յարգութեամբ կը պա-  
տուեն : Երբոր այս դրոշը որ և իցէ  
ազգային կամ կրօնական պիտոյից հա-  
մար դուրս հանուի, ամէն Ճամարիա  
Արհմետականք պէտք է որ զինուորին  
անոր տակը :

Այս պատերազմի ժամանակ դուրս  
կը հանեն Արհմետի դրոշը . և այն ա-  
տեն թագաւորը պէտք է անձամբ զլուխ  
կենայ օսմանեան բանակին : Ծակալէտ  
սովորութիւն չկայ մահմէտական ազ-  
գաց դէմ տրուած պատերազմներու  
մէջ այս դրոշը գործածելու, որպէս զի  
ըլլայ թէ իր յարգը կորսընյընէ, սա-  
կայն երբոր մեզմէ գրեթէ երեսուն  
տարի առաջ Առլիդան Արհմետ Բ-  
ուզեկ Անիչէրիները բնաջինջ ընել,  
այս դրոշովս (Ս) օսմանեանց եռանոցը վա-  
ռեց անոնց դէմ : Այս հակառակ՝ նոր  
գաղթած Արևելեան պատերազմին ժա-  
մանակ Տաճկըները սիրտ ըըրին Արհ-

մետի դրօշը բանակ տանելու , և անով բոլոր ազգը Այսաց դէմ գրգռելու : Այս զգուշութեանս պատճառ ոչ այն չափ ժամանակաց և գաղափարներու փոփոխութիւնքն են , որչափ Դաշնակից քրիստոնեայ տէրութեանց նախատինք մը ընելու վախը . մանաւանդ զի կրնար ըլլալ որ կրօնամոլ ժողովրդեան մը եռանդը վառելով՝ սուրերնին և կատաղութիւննին անոնց դէմ դարձրնէին , որոնք օսմանեան պետութեան անկախութիւնը պահելու համար այն չափ զոհ և ծախք աջուրնին առեր էին :

Հին ատեն երբոր այս դրօշը դուրս կը հանուէր , Ճամբուն վրայ եղող Արոպացիք սկէտք էր որ տներնին քաշուէին , ու պատուհանները և դռները գոցելով սպասէին ինչուան որ իրենց տանը առջեկն անցնէր : Եղան օսմանք որ հետաքրքրութեամք այսպիսի հանդէս մը տեսնել ուզելով՝ ծածուկ տեղուանք կը գոցուէին . սակայն ժողովրդեան խուզարկութենէն չկրնալով ազատիլ , դառն մահուամք իրենց հետաքրքրութեան առանք կը լուծէին :

Տաճկաց պատմիները ընդհանրապէս կը կարծեն՝ թէ այս դրօշս Վահմետին առաջին դրօշն ըլլայ . վասն զի Վահմէտ ուրիշ այլ և այլ դրօններ ունէր , որոնց մէկը իր Այիշէ կնոջ խուցին դրան կերպասէ վարագոյն էր : Խսկ այն դրօշուն համար , որուն վրայ կը խօսինք , իրենց պատմութիւնը առանկ կ'աւանդէ :

Վահմէտ Վեքքէէն փախչելէն իրեք օր ետքը մերձաւոր դաշտերու մէջ կը մնալորի , ան տեղուանքը նոր վարդապետութիւն մը կը քարոզէ , որով մարգարէ կը կարծուի և շատ ժողովրդեան կ'առաջնորդէ : Վեկ օր մը նորէն Վետինէի կողմերը դառնալով իր երկու հաւատարիմ աշկերտներուն հետ , Պիւրէիտ-Վէլիման անունով մէկու մը կը հանդիպի , որն որ վաթսուն հոգոյ գլուխ կեցած իրեն ետևէն կ'երթար : Վահմէտ ամենայն ջանք կ'ընէ որպէս զի զանոնք իրեն վարդապետութեանցը հետևցընէ . Վէլիման մէկէն վերին

ազդեցութեամք , ինչպէս իրենք կ'ըսէն , կը հանէ գլխանոցին վրայի լաթը . և նիզակի վրայ պլլելով՝ դրօշու մը պէս կը շարժէ ՚ի պատիւ մարգարէին :

Վըսեն թէ աս դրօշը զոր Վահմէտ իր ըրած արշաւանքներուն հետը կը քալ ցընէր , հիճրէթի ժԱ տարին Հաւզա , իր հօրեղքորը ձեռքը ինկաւ . անկէ ալ յափշտակեց Վահմէտի փեսայն . երբոր յաղթանակաւ Վեքքէ մտաւ :

Վահմետի դրօշը գրեթէ չորս մեզպ երկայնութիւն ունի . քառակուսի արծաթապատ տուփի մը մէջ կը պահուի , և հետը պղտի զուրան մը ( ) սման խալի Փային ձեռքովը գրուած : Վասն վրայ ուրիշ դրօշ մըն ալ կայ որ ( ) մար խալի Փայինը կը կարծուի : Վահմետականք մեծապէս զգուշութիւն կ'ընեն որպէս զի ըլլայ թէ այսպիսի սրբազնան աւանդի մը վրայ փոխի նստի . ուստի քառասուն կերպասեայ լաթերու մէջ կը պահէն , և անոնց ամենուն վրայ կանաչ կերպասեայ գիպակ մը կը փաթութեն : Վաքունեաց այն խուցին մէջ յորում մարգարէին դրօշը պահուած է , փառաւոր կանթեզներ կախուած են , որոնք տարուան սահմանեալ օրերու մէջ կը վառուին և մեծամեծները և կարդացողք հոս կու գան աղօթելու և խունկ ծխելու : Հիճրէթի 1003էն կամ Վլրիստոսի 1590 թուականին Վահմէտ Արոպա բերուած է այս դրօշ :

1769էն մարտի 29էն Տաճկըները Այսաց Կատարինէ երկրորդ թագուհուն հետ ըրած պատերազմի ժամանակ գուրս հանեցին զանիկայ : Վնիկէ ետքը նոյնպէս 1826 տարւոյն յունիս ամսոյն մէջ վերջին անգամ մըն ալ հանուեցաւ , և այն տարւոյն պատահեցաւ , ինչպէս որ ըսինք , Վնիկը երիներուն սարսափելի կոտորածը : — Պալ ամսով կը դնենք Տաճկի պատմութեան այս ամենամեծ գիպուածներէն մէկը , ինչպէս որ Վամարդին իր Ճարտար ու վառվառն բանաստեղծութեամբը կը պատմէ :

